ԳՐԻԳՈՐ ՀԱՌԻՃԵՑՈՒ ՆՈՐԱՅԱՅՏ ԹՈՒՂԹԸ

Կարէն Սաթեւոսեան

Հառիճի 12-րդ դարի նշանաւոր վանահայր, Մխիթար Անեցու պատմութեան պատուիրատու Գրիգոր վարդապետի նոր յայտնի թուղթը բացայայտում է նրա ունեցած կապը Անիի դպրոցի ուսուցչապետ, նշանաւոր Յովհաննէս Սարկաւագի հետ[1]: Մինչ թուղթը ներկայացնելը ծանօթանանք Գրիգոր վանահօր մասին պահպանուած տեղեկութիւններին:

Հառիճը մեծ հռչակ ձեռք բերեց 12-րդ դարի վերջերին, երբ շուրջ 1197 թուականին Իւանէ եւ Զաքարէ Զաքարեաններն այն գնեցին նախկին հայրենատէրերից, այստեղ հիմնեցին ամրոց եւ կառուցեցին Կաթողիկէ Ս. Աստուածածին մեծադիր եկեղեցին (1201 թ.)[2]: Սակայն մինչ այդ Հառիճի վանքը վերականգնել էր Գրիգոր վանահայրը Անի-Շիրակն աւերած 1064 թ. սելջուկեան արշաւանքներից շուրջ 100 տարի անց, այսինքն՝ 1160-ական թուականների երկրորդ կէսին: Այդ մասին է վկայում վանքի Ս. Գրիգոր եկեղեցու պատին նրա թողած արձանագրութիւնը. «Ես Գրիգոր առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճայի շինեցի զտեղի սննդեան իմոյ ի Ճ (100) ամեայ կործանմանէ եւ կարգեցի ի սա արս ընտրեալս եւ խրատեալս աւրինաւքն Աստուծոյ եւ հաստատեցի կամակցութեամբ եղբարց...»[3]:

Հառիճեցիները Գրիգոր վանահօր մահից յետոյ գնահատել են նրա վաստակը եւ հոգացել յիշատակը պահպանելու մասին[4]: Ինքնին խօսուն է նաեւ Գրիգորի՝ Հառիճում պահպանուած տապանաքարի արձանագրութիւնը. «Այս հանգիստ է երջանիկ ծերունի սուրբ հայր Գրիգորի՝ առաջին առաջնորդի երկրորդ շինութեան սուրբ ուխտիս, որ էր ուսուցիչ եւ աւրինակ բարեաց ամենեցուն: Աղաչեմք, որք երկրպագէք սրբոյ խաչիս ասացէք. Աստուած յիշեսցէ զհայր Գրիգոր յողորմութեան իւրում եւ զգրիչս եւ զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն: Ի թուին Հայոց ՈԼԷ (1188)»[5]:

Գրիգորի մասին յաջորդ յիշատակութիւնը պահպանուել է պատմիչ Մխիթար Անեցու մօտ: Ցաւօք, այդ արժէքաւոր պատմութիւնը, որը բարձր են գնահատել դրանից օգտուած յաջորդ դարի հեղինակները (Վարդան Արեւելցի, Ստեփանոս Օրբէլեան), այժմ կորած է, եւ պահպանուել է միայն սկզբի մասը: Մխիթար Անեցու պատմութեան առաջին հատուածը պարու-

1 Այս մասին տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, *Յովհաննէս Սարկաւագի գործունէութիւնն Անիում*,- «Էջմիածին», 2005, Է, էջ 59-72:

2 Հառիճը Զաքարեանների առաջին տիրոյթն ու յենակէտը դարձաւ Շաղդադեանների տիրապետութեան տակ գտնուող Շիրակում, որի ոստանին՝ Անիին, նրանք տիրեցին 1198 թ. վերջերին: Տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, *Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչութեան կենտրոնը եւ յարակից հարցեր)*, «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124. **Ա. Շահնազարեան**, *Զաքարեանների ազատամարտերի առաջին փուլը*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, «Հայոց պատմութեան հարցեր», գիտական յօդուածների ժողովածոյ, թիւ 6, Երեւան, 2005, էջ 140-142:

3 **Յ. Քիւրտեան**, *Հառիճոյ վանքի արձանագրութիւնները*,- «Բազմավէպ», 1957, 11-12, էջ 267-268:

4 «Կամաւն Աստուծոյ մեք հառիճեցիքս՝ հայր Պետրոս եւ այլ եղբարքս, սահմանեցաք ի տաւնի Տապանակին ի մի մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ, փոխանակ արդեանց իւրոց... ՈՒՍԱ (1192)» (տե՛ս **Յ. Քիւրտեան**, նշ. աշխ., էջ 268):

5 **Յ. Քիւրտեան**, նշ. աշխ., էջ 268:

նակող մեզ հասած միակ ընդօրինակութեան մէջ (ԺԵ դ.) երկի անուանումը այսպիսին է. «Հանդէսք բանից աշխարհագրամար զրուցաց, տիեզերապատում անցից՝ վիպասանեալ ի քաջ գիտնականէ Մխիթարայ, աւագերիցու մեծ Կաթուղիկէին Անւոյ հոյակապ քաղաքի, ի խնդրոյ հաւր Հառիճայի Գրիգորոյ վարդապետի»[6]: Իսկ պատմութեան առաջին ճառում ներկայացնելով իր աշխատութեան նպատակը՝ Մխիթար Անեցին հետեւեալ խօսքերով է դիմում Գրիգորին. «Արդ՝ ո՛ պատուական հայր Գրիգորիէ, գրեթէ զհարիւր եւ խ (40) ամաց մեծամեծ գործս խնդրէ քո պատուականութիւնդ՝ ի ժամանակաց անտի Յովհաննիսի, յետին եւ վերջնոյն Բագրատունեաց, մինչեւ ի ներկայս յայս, յորում եմս դեռ եւս»[7]: Այսինքն՝ Գրիգորը խնդրել է գրել վերջին 140 տարուայ պատմութիւնը՝ սկսած Յովհաննէս Սմբատ Թագաւորի գահակալութեան աւարտից (1041 թ.): Ըստ այդմ, նա Մխիթար Անեցուն պատմութիւնը պատուիրել է մօտաւորապէս 1181 թուականին (1041+140): Վերոնշեալ հատուածի շարունակութեան մէջ Մխիթար Անեցին պատուիրատուին բացատրում է, որ կարեւոր է նաեւ նախընթաց շրջանի պատմութիւնը, որն ինքը ներկայացնելու է շատ կարճ՝ «յոյժ համառաւտիւ», իսկ ամբողջ գործը՝ երեք պրակով[8]:

Ինչպէս երեւում է, Մխիթար Անեցու գործը բաւական երկար է տեւել եւ աւարտուել է պատուիրատուի մահից յետոյ, քանի որ, ինչպէս ինքն է գրում, նրա պատմութիւնը «լայն եւ տարած բանիւք յընդարձակեալ» հասել է «մինչ ի ՈՒԲ (1193) թուականս»[9]:

Հառիճի Գրիգոր վանահօր մասին մինչեւ այժմ յայտնի այս տեղեկութիւններին աւելանում է Մատենադարանի ձեռագրերից մէկում (թիւ 2680) պահպանուած նրա գրած մի թուղթը, որը հասցէագրուած է Յովսէփ վարդապետին[10]: Այդ նամակով Գրիգորը Յովսէփ վարդապետին (որը, թերեւս, ժամանակին իր սանն է եղել եւ որին «սիրելի որդի» է կոչում) խնդրում է գրել մի աղօթք այն քահանաների համար, որոնք, պատարագին ներկայ գտնուելով, չեն մասնակցում ծէսին եւ հաղորդութիւն պէտք է ստանան ծիսակատար քահանայից:

Գրիգորի թուղթը փոքրածաւալ է, զբաղեցնում է ձեռագրի ընդամէնը կէս էջ, որին անմիջապէս յաջորդում է Յովսէփ վարդապետի գրած աղօթքը՝ շուրջ 6 էջ[11]: Աղօթքի վերնագիրն է. «Յովսեփայ վարդապետի աղաւթք քահանայից հանդերձելոց միջնորդաւ մերձենալ ի սուրբ Գոհութիւնն, ի խնդրոյ հաւր Գրիգորոյ Հառիճայի» (Յովսէփ վարդապետի՝ Հառիճի վանահայր Գրիգորի խնդրանքով գրած քահանաների աղօթքը, որոնք պատրաստւում են միջնորդով մօտենալ սուրբ Հաղորդութեանը):

Դժուար է ստոյգ ասել, թէ ով է նշուած Յովսէփ վարդապետը, սակայն մեր

6 **Մխիթար Անեցի**, *Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց*, աշխատասիրութեամբ Հ. Գ. Մարգարեանի, Երեւան, 1983, էջ 56:

7 Նոյն տեղում, էջ 61:

8 Նոյն տեղում: Մխիթար Անեցու եւ նրա պատմութեան մասին հանգամանօրէն տե՛ս Հ. Մարգարեանի հետազօտութիւնը նշուած հրատարակութեան սկզբում (էջ 5-56):

9 **Մխիթար Անեցի**, էջ 59:

10 Թուղթը պահպանուել է 1371-1378 թթ. Անգեղակոթում գրուած մի մեծարժէք ժողովածոյի մէջ, որը թէեւ վերնագրուած է «Հարանց վարք», բայց շատ աւելի բազմազան նիւթեր է պարունակում (ՄՄ, ձեռ. թիւ 2680, թերթ 513բ-514ա):

11 ՄՄ, ձեռ. թիւ 2680, թերթ 514ա-516բ: Առայժմ անտիպ այս աղօթքի վերջին հատուածը վերնագրուած է՝ «Յետ ճաշակմանն» (516ա), այսինքն այս հատուածը, որը եռամաս է՝ ուղղուած «ի Հայր», «յորդիս», «ի Հոգին», պէտք է ասուէր հաղորդութիւնն ստանալուց յետոյ:

© National Library of Armenia

կարծիքով, նա կարող է Յովսէփ Հաղբատեցին լինել[12]:

Փոքր լինելով հանդերձ՝ Գրիգոր Հառիճեցու թուղթը որոշ պատկերացում է տալիս նրա գրաւոր խօսքի կուռ ոճի եւ պատկերաւորութեան մասին:

Գրիգորի թղթին յատկապէս կարեւորութիւն է հաղորդում այն հատուածը, ուր նա խօսում է Յովհաննէս Սարկաւագի մասին: Նշելով, որ իր համար յոյժ ցանկալի է եղել նման աղօթք ունենալը, Գրիգորն աւելացնում է, թէ կը ցանկանար, որ այդ աղօթքը Յովհաննէս Սարկաւագը գրէր, սակայն Սուրբ Հոգին տնօրինել է, որ այդ գործը Յովսէփը կատարի: Իսկ նամակի վերջում կրկին շեշտում է իր կապը Յովհաննէս Սարկաւագի հետ՝ գրելով, որ «մանուկ» ժամանակ կորցրեց նրան՝ «ծեր իմաստունին», բայց երկրորդ «մանուկ եւ իմաստուն» (այսինքն՝ Յովսէփին) գտաւ իր ծերութեան ժամանակ: Ակներեւ է, որ այստեղ նա «մանուկ» բառն օգտագործում է «երիտասարդ» իմաստով:

Գրիգորի տապանաքարի արձանագրութիւնից երեւում է, որ նա մահացել է ծեր հասակում, որպէս «երջանիկ ծերունի»: Եթէ ենթադրենք, որ Գրիգորն իր մահկանացուն կնքելիս՝ 1188-ին, մօտաւորապէս 80 տարեկան էր (եթէ ոչ աւելի մեծ), ապա Յովհաննէս Սարկաւագի մահուան ժամանակ (1129 թ.) առնուազն 20-21 տարեկան պիտի լինէր: Իսկ այն, որ թղթում նա Յովհաննէս Սարկաւագին մտերմիկ ձեւով կոչում է «մեր Սարկաւագը», թոյլ է տալիս ենթադրել, որ ժամանակին հառիճեցի երիտասարդը մեծ ուսուցչապետի կրտսեր աշակերտներից մէկն է եղել: Գրիգորի արդիւնաւոր գործունէութիւնը Հառիճում, նաեւ գրասէր եւ ուսումնասէր նկարագիրը, դրա առհաւատչեան են:

Ստորեւ Գրիգոր Հառիճեցու թուղթը ներկայացնում ենք կից աշխարհաբար փոխադրութեամբ:

12 Հաղբատում 1173 թ. Բարսեղ Կեսարացու ճառերն ընդօրինակած Սարգիս գրիչը յիշատակարանի վերջում նշում է. «Կազմեցաւ ձեռամբ *Յովսեփայ վարդապետի եւ եղաւ յարկեղ* Սրբոյ Նշանիս» (տե՛ս *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 208): Յովսէփ վարդապետը, հաւանաբար, ոչ միայն կազմող էր, այլեւ եկեղեցու ձեռագրական պահոցով զբաղուող մարդ: Այդ երեւում է նաեւ Յովսէփ վարդապետի անուան միւս յիշատակութիւնից: 1305 թ. Եսայու մարգարէութիւնն ընդօրինակած մի գրիչ իր ունեցած նախօրինակի մասին յայտնում է. «...Կատարեցաւ տառս... ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի, զոր *սուրբ վարդապետին Յովսէփայ* գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (տե՛ս *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 34): Հիմնադրման ժամանակից Հաղբատի վանքը կապուած էր Անիի հետ, իսկ Յովհաննէս Սարկաւագի գործունէութեան շրջանում ու դրանից յետոյ այդ կապն առաւել սերտ էր (Հաղբատի վարդապետ լինելով՝ Յովհաննէս Սարկաւագը շուրջ չորս տասնամեակ ուսուցչութիւն արեց Անիում, իսկ մահից յետոյ թաղուեց Հաղբատում): Սարկաւագի սան Գրիգորի թղթում վարդապետի յիշատակման եղանակը՝ «մեր Սարկաւագ» («...ցանկայի զայս լինել ի մերմէն Սարկաւագէ») հաւասարապէս հոգեհարազատ պիտի լինէր Հաղբատի միաբանի համար:

ԹՈՒՂԹ ԳՐԻԳՈՐՈՅ ՀԱՒՐՆ ՀԱՌԻՃԱՅԻ ԱՌ ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ, ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ ԻԻՐ

Ի հեռուստ ժամանակաց հետէ՝ գեղձմամբ սրտի, այս են փափագանք սրտի իմոյ, պատշաճաւոր եւ դիպող աղաւթք կարգել ի քաջէ եւ յաստուածունակ առնէ, զի որ արտաքոյ աղաւթելն կամիցի հաղորդ սուրբ խորհրդոյն՝ ձայնակից լեալ աղաւթեսցէ ի միասին վճարմամբ, զի գեղեցկապէս եւ կարգաւոր լիցի դրութիւնն:

Եւ արդ՝ զի գըտի զոր սիրէի եւ հարկ առնեմ բռնութեամբ փափագանաց, զի լըցցես անյապաղապէս: Ցանկայի զայս լինել ի մերմէն Սարկաւագէ, այլ Հոգին քեզ պատշաճեալ պահեաց: Զի որպէս նայն // (513բ) այլովք յոլովիւքն սաապէս եւ դու սակաւուքս հաղորդեսցիս զտկարութիւն տկարաց բառնալ: Եւ դիցէս զտկարութիւն տկարաց բառնալ: Եւ դիցէս ադերս բանի սրտաբէկ ի բերան աղօթողին, զի ադերս բանի սրտաբէկ ի բերան աղօթողին, զի փրկութեանն եւ արտասուացն մասնաւոր լինիցիս:

Հաւատա ինձ որդեակ իմ, զի թէ զիմն ծեր զվերասացեալն իմաստուն՝ լըքի ի մանկութենէ իմում, զմանուկ եւ զիմաստուն երկրորդ գըտի ի ծերութեան իմում, առաւել բերկրութիւն սրտի:

Ո՛ղջ լեր Աստուծով:

(Մատենադարան, ձեռ. թիւ 2680, թերթ 514ա):

Հառիճի վանահայր Գրիգորի թուղթը Յովսէփ վարդապետին՝ իր սիրելի որդուն

Վաղ ժամանակից ի վեր, սրտի տենչանքով, այս է իմ սրտի փափագը, որ մի գիտակ եւ աստուածահաճոյ մարդ պատշաճ եւ յարմար աղօթք գրի, որպէսզի դրսում աղօթողը, կամենալով մասնակցել սուրբ խորհրդին, ձայնակից լինելով, աղօթի՝ միասին աւարտելով, որպէսզի գեղեցիկ եւ կանոնաւոր լինի խօսքը:

Եւ ուրեմն՝ քանի որ գտայ, ինչ ուզում էի, եւ փափագիս ճնշումից հարկադրուած եմ, պիտի լիացնես՝ առանց յապաղելու: Կը ցանկանայի, որ դա մեր Սարկաւագը (Յովհաննէս Սարկաւագ - Կ. Մ.) անէր, բայց Սուրբ Հոգին քեզ յարմար համարեց: Որպէսզի ինչպէս որ նա այլ բազում բաներով, այդպէս եւ դու փոքր-ինչ մասնակցես տկարների տկարութիւնը վերացնելուն: Եւ սրտառուչ ադերսական խօսք դնես ադօթողի բերանում, որպէսզի նրա փրկութեանն ու արտասուքներին մասնակից լինես:

Հաւատա ինձ, որդեակ իմ, որ իմ վերեւում յիշած ծեր իմաստունին հրաժեշտ տուեցի մանկութեանս ժամանակ, բայց երկրորդ մանուկ եւ իմաստուն գտայ իմ ծերութեան ժամանակ, սրտի մեծ բերկրանքով:

Ո՛ղջ եղիր Աստծով:

© National Library of Armenia